ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

20 դեկտեմբերի 2012թ. թիվ 656

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՈՐՈՇ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով, «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ս.Հովհաննիսյանի զեկուցագիրը և հաշվի առնելով, որ մարզպետարանի ապարատի 2012թ. պահպանման ծախսերի «Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարներ» և «Այլ վարձատրություններ» հոդվածներում հոդվածում առկա է տնտեսում՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Մարզպետարանի առջև դրված աշխատանքների կոորդինացման և խնդիրների իրականացման գործում որակով և ակտիվ աշխատանքի համար մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալին և վարչությունների պետերին պարգևատրել դրամական պարգևով՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետարանի առջև դրված խնդիրների կենսագործման և աշխատանքների համակարգման գործում արդյունավետ և ակտիվ աշխատանքի համար մարզպետի խորհրդական Լևոն Ասլանյանին պարգևատրել 97000 դրամ գումարի չափով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 20
ք.Վանաձոր